

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ Ու ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

«25» հունվարի 2019թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտը, ի դեմս տնօրեն Սամվել Չախյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի ներդրումը մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը՝ ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ **180754100 (հարյուր ութսուն միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ)**, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1.ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

- 2.1.1.** Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,
- 2.1.2.** ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
- 2.1.3.** չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6-րդ** մասով նախատեսված տուգանքը,
- 2.1.4.** առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
- 2.1.4.1.** Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
- 2.1.4.2.** Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),
- 2.1.4.3.** իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,
- 2.1.5.** Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

- 2.2.1.** ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
- 2.2.2.** Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
- 2.2.3.** ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

- 2.3.1.** Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
- 2.3.2** ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,
- 2.3.3.** ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

- 2.4.1.** Ծրագիրը կատարել անձամբ,
- 2.4.2.** Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,
- 2.4.3.** Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից մինչև 10 տոկոս շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում, ապա՝ կնքել համաձայնագիր,

2.4.8. իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.9. Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը,

2.4.11. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.12. Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է՝ 180754100 (հարյուր ութսուն միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4. Մոնիթորինգ

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն

իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

ՀՎՀՀ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)



ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան
Կենսաքիմիայի ինստիտուտ
ք. Երևան, Պ. Սևակի փող. 5/1

ՀՎՀՀ 00009794

Երևանի թիվ 1 ՏԳԲ
h/h 900018005463

Տնօրեն՝ Սամվել Չախլյան

(ստորագրություն)



Ծրագրի գիտական ղեկավար՝



(Սամվել Չախլյան)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում կյուբափոխանակության, ստրեսի, աղապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը՝ ծրագրի

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Ն. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն Սամվել Չախյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «24 հունվարի 2019 թ. N 4-15 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ 180754100 (հարյուր ութսուն միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

ՀՎՀՀ 900011024115
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

Օրագրի գիտական ղեկավար՝ 

ՀՀ ԳԱԱ Ն. Բունիաթյանի անվան
կենսաքիմիայի ինստիտուտ
ք. Երևան, Պ. Սևակի փող. 5/1

ՀՎՀՀ 00009794
Երևանի թիվ 1 ՏԳԲ
h/h 900018005463

Տնօրեն՝ Սամվել Չախյան
(ստորագրություն)

(Սամվել Չախյան)

ԱՌԱՋԱՐԴԱՆՔ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկերի ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

Ուսումնասիրել բնական և սինթետիկ կենսաբանական ակտիվ տարբեր միացությունների մասնակցությունը և դերը օրգանիզմի նյութափոխանակության գործընթացում նեյրոդեգեներատիվ, չարորակ և շաքարախտային հիվանդությունների կանխարգելման և հնարավոր բուժման նպատակով:

Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները Հետազոտել նյութափոխանակության համար կարևոր նշանակություն ունեցող կենսաբանական ակտիվ միացությունների ազդեցությունը նորմայում և տարբեր հիվանդությունների դեպքում: Շարունակել պրոլիմոլ հարուստ պոլիպեպտիդ գալարմինի հետազոտությունը վարակիչ, ուռուցքային և արյունաբանական հիվանդությունների բուժման համար: Հետազոտել մկների էրլիխի ասցիտային կարցինոմայի (ԷԱԿ) և մարդու կրծքագեղձի քաղցկեղի բջջային կուլտուրաների վրա գալարմինի հակուռուցքային ազդեցության մոլեկուլային մեխանիզմների բացահայտումը ցիտոստատիկ (հակապրոլիֆերատիվ) և/կամ ցիտոտոքսիկ (ապոպտոտիկ) ճանապարհով:

Նախատեսվում է որոշել գալարմինի այն արդյունավետ քանակները, որոնք կհարուցեն ուղեղի, թոքի բջջաթաղանթների, ներբջջային կազմավորումների և էրիթրոցիտների թաղանթների, ինչպես նաև այդ թաղանթներից արտազատված Nox1+Nox2-ի ֆերիհեմոգլոբինի վերականգնման և սուպերօքսիդների գեներացման ակտիվության և մակարդակի աճ փորձարարական իմունաանբավարարության ժամանակ:

Գնահատել ԴՊՊIV և ԱԴԱ ֆերմենտների ակտիվությունները տարբեր արթրիտների սինովիալ հեղուկում, համեմատել միմյանց միջև հնարավոր կորելացիան: Հետազոտել բնական և սինթեզված միացությունների *ex vivo* ազդեցությունը այս ֆերմենտների ակտիվության վրա:

Հետազոտել շաքարախտի հետ ֆունկցիոնալ կապ ունեցող որոշ Ca^{2+} -կապող սպիտակուցների (PEA-15, նեյրոկալցին , կալբինդին, կոմպլեքսին) էքսպրեսիայի մակարդակի փոփոխությունը շաքարախտի պաթոֆիզիոլոգիայում հեմորֆինի (LVV-H3) ազդեցությամբ:

Օգտագործել լեկտինները – շաքար կապող սպիտակուցները, որպես մարկերներ քաղցկեղային բջիջները հայտնաբերելու համար: Այդ նպատակով նախատեսվում է օգտագործել ինչպես ֆուկոզ, այնպես էլ սիալաթթու կապող լեկտինները:

Ելնելով մեր այն վարկածից, որ գլյուտամինից ուղեղում կարող է առաջանալ ԳԱԿԹ-ամիդ և ապա ԳԱԿԹ և այդ ուղին խթանվում է ուղեղի ինտոքսիկացիայի ժամանակ, հետաքրքիր է ուսումնասիրել այդ ուղու առկայությունը ենթաստամոքսային գեղձում նորմալում և դրա դերը փորձարարական շաքարային դիաբետի ժամանակ: Միաժամանակ կուսումնասիրվի ասպարազինի հնարավոր ուղղակի դեկարբոքսիլացումը β -ալանինի ամիդի և ապա ԳԱԿԹ-ի հոմոլոգ β -ալանինի ստացմամբ: Հետազոտությունները կկատարվեն ենթաստամոքսային գեղձի հոմոգենատների և միտոքոնդրիումների հետ:

Շարունակել հետազոտությունները հակաօքսիդանտային ակտիվությամբ օժտված պլաստոքինոնի ածանցյալ SkQ1-ի և գալարմինի ազդեցության վերաբերյալ ածխածնի տետրաքլորիդով մակաձված լյարդի ցիտոզի և կորագոլով մակաձված էպիլեպսանման ցնցումների դեպքում, որը հնարավորություն կընձեռի լիարժեք մեկնաբանելու լյարդի ցիտոզի և էպիլեպսիայի ախտաբանության կենսաքիմիական ասպեկտները, ինչպես նաև հնարավոր կդարձնեն հակաօքսիդանտային ակտիվությամբ օժտված պատրաստուկների ազդեցության մեխանիզմների բացահայտումն ու դրանց կիրառումը որպես լյարդի ցիտոզի և էպիլեպսիայի կանխարգելիչ, բուժիչ միջոցներ:

Շարունակել երկշերտ լիպիդային մոդելային համակարգերում և հյուսվածքներում տարբեր ֆիզիկաքիմիական գործոնների՝ այն է ՌԻՄ և էլեկտրական հոսանքի ազդեցության ժամանակ դիտվող թաղանթային լիպիդների գերօքսիդային օքսիդացման պրոցեսների պարզաբանմանը ուղղված ուսումնասիրությունները:

4.Աշխատանքի բովանդակությունը 2019թ. նախատեսվում է շարունակել կենսաբանորեն ակտիվ տարբեր միացությունների ազդեցությունը օրգանիզմում ընթացող տարբեր գործընթացներում:

Ուսումնասիրել պրոլինով հարուստ պեպտիդ GX-NH₂ -ի ֆիբրինոլիտիկ ակտիվությունը սպոնտան էուզլոբուլինային ֆիբրինոլիզի և Հագեման (F XII)-կալիկրեին – կախյալ ֆիբրինոլիզի մեթոդներով: Հետազոտվելու է նաև ֆիբրինոլիզի վրա թթվային և հիմնային ֆոսֆատազաների ակտիվության վրա պրոլինով հարուստ պեպտիդ գալարմինի ունեցած ազդեցությունը:

Հետազոտել գալարմինի և անալոգների կենսաբանական ակտիվությունը կենսահիֆոբրմացիոն մակարդակում մոլեկուլային դոկինգի մեթոդով՝ bPrp1, bPrp(-Y), bPrp(-VY), GxNH₂, և hPrp5 պեպտիդների փոխազդեցությունը կաթնասունների տոլանման ռեցեպտորի և մարդու կալցիում զգացող ռեցեպտորի հետ AutoDock Vina ծրագրով:

Նախատեսվում է մկների Էրլիխի ասցիտային կարցինոմայի (ԷԱԿ) և մարդու կրծքագեղձի քաղցկեղի բջջային կուլտուրաների վրա գալարմինի հակուռուցքային ազդեցության մոլեկուլային մեխանիզմների բացահայտումը ցիտոստատիկ (հակապրոլիֆերատիվ) և/կամ ցիտոտոքսիկ (ապոպտոտիկ) ճանապարհով: Հետազոտվելու է փորձարարական իմունային անբավարարության ժամանակ էկզոգեն ներարկված գալարմինի ազդեցությունը և պարզաբանվելու են դրա մեխանիզմները: Հետազոտության նպատակն է որոշել գալարմինի այն արդյունավետ քանակները, որոնք կհարուցեն ուղեղի, թոքի բջջաթաղանթների, ներբջջային կազմավորումների և էրիթրոցիտների թաղանթների, ինչպես նաև այդ թաղանթներից արտազատված Nox1+Nox2-ի ֆերիհեմոգլոբինի վերականգնման և սուպերօքսիդների գեներացման ակտիվության և մակարդակի աճ փորձարարական իմունային անբավարարության ժամանակ:

Ուսումնասիրել ԱԴԱ, ԴՊՊԻՎ և գլուտամինազ ֆերմենտների ակտիվությունների գնահատման և կարգավորման գործընթացը: Հաշվի առնելով իմունային համակարգի և բորբոքային պրոցեսների զարգացման գործում ԴՊՊԻՎ, ԱԴԱ և գլուտամինազ ֆերմենտների կարևորությունը, ակնհայտ է, որ դրանց ակտիվությունների որոշումը և կարգավորումը հեռանկարային է շատ հիվանդությունների ախտորոշման, բուժման/կանխարգելման համար: Նախատեսվում է ուսումնասիրել ընդհանուր ԱԴԱ ակտիվության փոփոխությունը շաքարախտ և սնկային հիվանդությունների դեպքում հղիության ժամանակ:

Վեսթերն բլոթ մեթոդով հետազոտել շաքարախտի հետ ֆունկցիոնալ կապ ունեցող որոշ Ca^{2+} -կապող սպիտակուցների (PEA-15, նեյրոկալցին, կալբինդին, կոմպլեքսին) էքսպրեսիայի մակարդակի փոփոխությունը շաքարախտի պաթոֆիզիոլոգիայում հեմոբֆինի (LVV-H3) ազդեցությամբ:

Օգտագործել լեկտինները – շաքար կապող սպիտակուցները, որպես մարկերներ քաղցկեղային բջիջները հայտնաբերելու համար: Օգտագործվելու են ինչպես ֆուկոզ, այնպես էլ սիալաթթու կապող լեկտինները: Այս սպիտակուցները կանջատվեն, կմաքրվեն և կկապվեն ինչպես ֆլուորեսցենտային, այնպես էլ ֆերմենտային մարկերների հետ, ինչը թույլ կտա օգտագործել նրանց քաղցկեղային բջիջների դետեկցիայի մեջ ինչպես ֆլուորեսցենտային մանրադիտակային եղանակով, այնպես էլ իմունաֆերմենտային անալիզի տարբեր տարատեսակներով: Երկրորդ էտապում փորձ կարվի օգտագործել այս լեկտինները քաղցկեղային բջիջների անջատման համար կենդանիների ասցիտային հեղուկից: Այս էտապը կարևորվում է նրանով, որ դրական արդյունքներ ստանալու դեպքում հնարավոր կլինի այս բջիջները օգտագործել հետազայում համապատասխան իմունային պատասխան ստանալու համար տվյալ քաղցկեղային բջիջների նկատմամբ:

Մշակել նոր մոտեցումներ երկբևեռ խանգարման ախտածին գործընթացների գնահատման ու բուժման վերահսկման համար, որի համար հետազոտվելու են մրցակցող ֆերմենտների՝ ազոտի օքսիդի սինթազի NOS-ի և արգինազի և փոխկապված կրեատինկինազի ակտիվությունների ու լիպիդների գերօքսիդացման տեղաշարժերը ԵՖ հիվանդների արյան լեյկոցիտների միտոքոնդրիումներում, բջջապլազմայում և արյան պլազմայում մինչ բուժումը և բուժման ընթացքում:

Ուռուցքների թերապիայի առավել հաջող նոր ուղղություններից մեկը դարձել է այսպես կոչված թիրախային թերապիան: Մեր կողմից առաջարկվում է նոր հակաուռուցքային ազենտ՝ զոնդ: Ուսումնասիրվելու են տրանսֆերին-պորֆիրին զոնդերի սպեկտրալ և ֆոտոֆիզիկական հատկությունները, ինչը կբացահայտի այդպիսի զոնդերի սինգլետային թթվածնի քվանտային ելքի արտադրման ունակությունը և ըստ այդմ՝ քաղցկեղային բջիջները ոչնչացնելու ունակությունը:

Սիզմայաձև աղու ադենոկարցինոմայով հիվանդներից տրանսլոկացիայի ընդունակ որոշ պայմանական պաթոգեն մանրէների, օրինակ E. coli-ի անջատումը նրանց կենսաքիմիական, մորֆոլոգիական, էլեկտրոնա-մանրադիտակային, գենետիկական տեղաշարժերի որոշումը թույլ է տալիս բացահայտելու նրանց դերը ուռուցքների բուժման ընթացքում: Այդ նպատակով պարզաբանվելու է, թե ինչին է բերում մանրէների տրանսլոկացիան, ինչ դեր է խաղում ուղեկցող բորբոքային պրոցեսների դեպքում, երբ առկա է ուռուցքի ռեգրեսիա և դիսվում են արդյո՞ք մանրէների մոտ գենետիկական փոփոխություններ:

Հետագոտել ածխածնի տետրաբորիդով մակաձված լյարդի ցիտոզի և կորագոլով մակաձված էպիէպսանման ցնցումների դեպքում հակաօքսիդանտային բնույթի որոշ նյութերի, մասնավորապես պլաստոքինոնի ածանցյալ SkQ1-ի և գալարմինի ազդեցությունը սպիտակ առնետների ուղեղի, լյարդի և փայծաղի ամբողջական միտոքոնդրիումներում, դրանց թաղանթներում և լուծելի ֆրակցիայում էներգիական փոխանակությանը մասնակցող Mg^{2+} , Ca^{2+} , HCO_3^- -կախյալ ԱԵՖագների, ինչպես նաև կրեատինկինազի, թթու և հիմնային ֆոսֆատազների ակտիվության վրա:

Իրականացնել հետազոտություններ՝ պարզելու էլեկտրաինդուկցված ազատ ռադիկալների ազդեցությունը թաղանթային կառույցներում ընթացող օքսիդանտային պրոցեսների վրա, պարզելու վերջիններիս դերը էլեկտրաբուժական էֆեկտի մեջ և որոշ նեյրոակտիվ միացությունների հավանական հակաօքսիդանտային ազդեցությունները այդ պրոցեսներում: Շարունակվելու են երկշերտ լիպիդային մոդելային համակարգերում և հյուսվածքներում տարբեր ֆիզիկաքիմիական գործոնների՝ այն է՝ ՌԻՄ և էլեկտրական հոսանքի ազդեցության ժամանակ դիտվող թաղանթային լիպիդների գերօքսիդային օքսիդացման պրոցեսների պարզաբանմանը ուղղված ուսումնասիրությունները

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը Հրատարակված հոդվածներ, տարեկան հաշվետվություններ, հանրապետական և միջազգային գիտաժողովների զեկույցներ:

Տնօրեն

(Մամվել Չախյան)

Մրազրի գիտական ղեկավար



(Մամվել Չախյան)

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլակոկերի ախտահարումներ) պաթոգենեզի ներդրումնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը” ծրագրի


Իրականացվելիք միջոցառման						
h/h	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	Ուսումնասիրել պրոլինով հարուստ պեպտիդ GX-NH ₂ -ի ֆիբրինոլիտիկ ակտիվությունը սպոնտան էուգլոբուլինային ֆիբրինոլիզի և Հագեման (F XII)-կալիկրեին – կալյալ ֆիբրինոլիզի մեթոդներով: Հետազոտվելու է նաև ֆիբրինոլիզի վրա թթվային և հիմնային ֆոսֆատազաների ակտիվության վրա պրոլինով հարուստ պեպտիդ գալարմինի ունեցած ազդեցությունը: Հետազոտել գալարմինի և անալոգների կենսաբանական ակտիվությունը կենսաինֆորմացիոն մակարդակում	Fmoc ամինաթթուների հենքի վրա սինթեզված գալարմինի ազդեցությունը հետազոտել տարբեր կենսաքիմիական համակարգերում:	Պեպտիդի սինթեզ և ազդեցության ուսումնասիրում սպեկտրաֆոտոմետրիկ և մասս սպեկտրային մոլեկուլային դոկինգի մեթոդներով	Քանակական տեղաշարժեր	1-ին եռամսյակ	20000.0


2.	<p>Շարունակել պրոլիտով հարուստ պոլիպեպտիդ գալարմինի հետազոտությունը վարակիչ, ուռուցքային և արյունաբանական հիվանդությունների բուժման համար: Հետազոտել մկների Էրլիխի ասցիտային կարցինոմայի (ԷԱԿ) և մարդու կրծքագեղձի քաղցկեղի բջջային կուլտուրաների վրա գալարմինի հակուռուցքային ազդեցության մոլեկուլային մեխանիզմների բացահայտումը ցիտոստատիկ (հակապրոլիֆերատիվ) և/կամ ցիտոտոքսիկ (ապոպտոտիկ) ճանապարհով:</p>	<p>Ակնկալվում է Էրլիխի ասցիտային կարցինոմայի մոդելով առնետների մոտ հայտնաբերել ԴՆԹ-ի կրկնապատկման (ռեպլիկացիայի) փուլի դանդաղեցում կամ ընդհատում առանց գալարմինի և գալարմինի ազդեցությամբ:</p>	<p>Մանրադիտակային հետազոտություններ Միկրոսկոպիա Կոնֆոկալ մանրադիտակ</p>	<p>Կառուցվածքային փոփոխությունների պատկերների ստացում</p>	<p>1-ին եռամսյակ</p>	<p>9 870.2</p>
3.	<p>Նախատեսվում է որոշել գալարմինի այն արդյունավետ քանակները, որոնք կհարուցեն ուղեղի, թոքի բջջաթաղանթների, ներբջջային կազմավորումների և էրիթրոցիտների թաղանթների, ինչպես նաև այդ թաղանթներից արտազատված Nox1+Nox2-ի ֆերիհեմոգլոբինի վերականգնման և սուպերօքսիդների գեներացման ակտիվության և մակարդակի աճ փորձարարական իմունաանբավարարության ժամանակ:</p>	<p>Սուպերօքսիդ-գեներացնող լիպոպրոտեինի (սուպրոլ) և Nox1+Nox2-ի գումարային ֆրակցիայի անջատման համալիր մեթոդի մշակում և դրա հետագա ներդրում կենսաբժշկության ու դեղագործության մեջ:</p>	<p>Մպեկտրասկոպիկ հետազոտություններ</p>	<p>Քաղցկեղի տոքսիկ ազդեցության մեղմում</p>	<p>2-րդ եռամսյակ</p>	<p>14000.0</p>
4.	<p>Հետազոտել շաքարախտի հետ ֆունկցիոնալ կապ ունեցող որոշ Ca^{2+}-կապող սպիտակուցների (PEA-15, նեյրոկալցին, կալբինդին,</p>	<p>Նախատեսվում է ուսումնասիրել կալցինեյրինի քաղցկեղի պաթոֆիզիոլոգիա-յում ներգրավված գործընկեր-ների</p>	<p>ELISA մեթոդի կիրառում Պրոտեոմե, գել-</p>	<p>Օգտագործել կալցինեյրինի հակադիր ազդեցությունը թիոռեդոքսինի և</p>	<p>2-րդ եռամսյակ</p>	<p>13000.0</p>


	կումպլեքսին) էքսպրեսիայի մակարդակի փոփոխությունը շաքարախտի պաթոֆիզիոլոգիայում հեմոբինի (LVV-H3) ազդեցությամբ:	(թիոռեդոքսինի և գլու-տաթիոնի) ակտիվության փոփոխությունը:	Էլեկտրաֆորեզ Western Blot	գլուտաթիոնի ակտիվության կարգավորման վրա:		
5.	Ուսումնասիրել այդ ուղու առկայությունը ենթաստամոքսային գեղձում նորմալում և դրա դերը փորձարարական շաքարային դիաբետի ժամանակ: Միաժամանակ կուսումնասիրվի ասպարագինի հնարավոր ուղղակի դեկարբոքսիլացումը β-ալանինի ամիդի և ապա ԳԱԿԹ-ի հոմոլոգ β-ալանինի ստացմամբ:	Ուսումնասիրվելու են ԳԱԿԹ-ի, ԳԱԿԹ գեներացնող որոշ միացությունների և բենտոնիտի կերային հավելման համատեղ ազդեցությունը ինտակտ փորձարարական շաքարային դիաբետի մոդելի վրա	Ֆերմենտային ակտիվության որոշում	Մշակել և առաջարկել նոր մոտեցումներ շաքարային դիաբետի բուժման համար:	2-րդ եռամսյակ	10337.825
6.	Գնահատել ԴՊՊIV և ԱԴԱ ֆերմենտների ակտիվությունները տարբեր արթոթիտների սինովիալ հեղուկում, համեմատել միմյանց միջև հնարավոր կորելացիան: Հետազոտել բնական և սինթեզված միացությունների <i>ex vivo</i> ազդեցությունը այս ֆերմենտների ակտիվության վրա:	Ուսումնասիրել բնական և սինթետիկ միացությունների կարգավորիչ ազդեցությունը այս ֆերմենտների վրա, որը օգտակար կլինի այն հիվանդությունների դեպքում, որոնցում գրանցվել են ֆերմենտների ակտիվությունների նորմալից շեղումներ՝ իմունային և նյարդային համակարգերի խախտումներ, քաղցկեղ, շաքարախտ, արթոթիտներ, տուբերկուլոզ և այլն:	Ֆերմենտների անջատման և մաքրման մեթոդներ, ակտիվության սպեկտրալ չափումներ	Պաթոլոգիաների կանխարգելման և բուժման գործում հնարավոր շտկումներ	3-րդ եռամսյակ	13000.0
7.	Ուսումնասիրել պրոլինով հարուստ պեպտիդ GX-NH ₂ -ի ֆիբրինոլիտիկ ակտիվությունը Հետազոտվելու է նաև ֆիբրինոլիզի վրա թթվային և հիմնային ֆոսֆատազաների ակտիվության վրա պրոլինով հարուստ պեպտիդ գալարմինի ունեցած ազդեցությունը:	Գալարմինի ֆիբրինոլիտիկ ակտիվությունը որոշվելու է պլազմայի էուզոբինային ֆրակցիայում Կովալսկու մեթոդի և Հագեման-կախյալ ֆիբրինոլիզի օգտագործմամբ:	Մակարդելիության որոշման մեթոդներ	Գալարմինի ազդեցության մակարդելիության գործընթացում ակնկալվող փոփոխություններ	3-րդ եռամսյակ	13000.0

8.	<p>Օգտագործել լեկտիոնները – շաքար կապող սպիտակուցները, որպես մարկերներ քաղցկեղային բջիջները հայտնաբերելու համար: Այդ նպատակով նախատեսվում է օգտագործել ինչպես ֆուկոզ, այնպես էլ սիալաթթու կապող լեկտինները:</p>	<p>Գլիկոզիլացված սպիտակուցների հայտնաբերման համար օգտագործվելու են լեկտինները շաքար կապող սպիտակուցները, որոնք ունեն լայն սպեկտրային ֆիզիոլոգիա, և կարող են օգտագործվել տարբեր շաքարներով գլիկոզիլացումը տարբերակելու համար: Իմունոֆեր-մենտային անալիզը օգտագործվելու է տարբեր տիպի գլիկոզիլացված շիճուկային սպիտակուցների բացահայտման և քաղցկեղի արդյունավետ ախտորոշումը ապահովելու համար:</p>	Սպեկտրալ մեթոդներ	<p>Լեկտինների օգտագործումը կարող է հանդիսանալ ախտորոշիչ միջոց տարբեր պաթոլոգիաները բացահայտելու համար:</p>	3-րդ եռամսյակ	11337.825
9.	<p>Մեր կողմից առաջարկվում է նոր հակառուսացքային ազենտ՝ գոնդ: Ուսումնասիրվելու են տրանսֆերին-պորֆիրին գոնդերի սպեկտրալ և ֆոտոֆիզիկական հատկությունները, ինչը կբացահայտի այդպիսի գոնդերի սինզլետային թթվածնի քվանտային էլքի արտադրման ունակությունը և ըստ այդմ քաղցկեղային բջիջները ոչնչանելու ունակությունը:</p>	<p>Քանի որ պորֆիրինների դե-սորբցիան նանոմասնիկներից թաղանթի վրա կամ մանրէի մեջ պորֆիրինների կոնցենտրացիայի մեծացման համար ունի կարևոր նշանակություն, ապա անհրաժեշտ է նաև ուսումնասիրել այդ գործընթացի վրա ազդող գործոնները:</p>	Աբսորբցիոն և ֆլուորեսցենտային սպեկտրոսկոպիայի մեթոդներ	Ակնկալվում է քաղցկեղի բուժման գործընթացի որոշակի շտկումներ	4-րդ եռամսյակ	21000.0
10.	<p>Մշակել նոր մոտեցումներ կրկնական խանգարման ախտաճիւղ գործընթացների գնահատման ու բուժման վերահսկման համար, որի համար հետազոտվելու են մրցակցող ֆերմենտների ազոտի օքսիդի սինթազի արգիւնազի և փոխկապված կրեատինկինազի ակտիվությունների ու լիպիդների գերօքսիդացման տեղաշարժերը:</p>	<p>պորֆիրոսիզիների խառնուրդը հետազոտում կլինիկայում ներդնելու միտումով: Հետազոտվելու են ազոտի օքսիդի սինթազի ակտիվության, կրեատին/կրեատինկինազի համակարգի ու լիպիդների գերօքսիդացման գործընթացների տեղաշարժերը հիվանդների արյան պլազմայում և լեյկոցիտների միտոքոնդրիումներում ու բջջապլազմայում:</p>	Սպեկտրալ մեթոդներ	Մտամոլության բուժման գործընթացում հնարավոր շտկումներ	4-րդ եռամսյակ	15082.49

	<p>ԵՆ հիվանդների արյան լեյկոցիտների միտոքոնդրիումներում, բջջապլազմայում և արյան պլազմայում մինչ բուժումը և բուժման ընթացքում:</p>					
11.	<p>Հետազոտել ածխածնի դիօքսիդից, լյարդից և փայծաղի տետրաքլորիդով մակածված լյարանջատված ամբողջական միտոքոնդրի և կորագոլով մակածված միտոքոնդրիումներում, դրանց թափափուկ և կորագոլների դեպքում և լուծել հակաօքսիդանտային բնույթի որոշակիայում էներգետիկական նյութերի, մասնավորապես փոխանակությանը մասնակցող պլաստոքինոնի ածանցյալ SkQ1-ի Mg^{2+}, Ca^{2+}, HCO_3^--կախյալ գալարմինի ազդեցությունը սպիտակազանների ուղեղի, լյարդի և փայծաղի ամբողջական միտոքոնդրիումներում, դրանց թափափուկ և կորագոլների դեպքում և լուծել ֆրակցիայում էներգետիկական փոխանակությանը մասնակցող Mg^{2+}, HCO_3^--կախյալ ԱԵՖազների ինչպես նաև կրեատինինազի, թթոհիմնային ֆոսֆատազների ակտիվության վրա:</p>	<p>Ֆերմենտների ակտիվության որոշման անալիտիկ և սպեկտրալ մեթոդներ</p>	<p>Ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն կտան էպիլեպսիայի դեպքում SkQ1-ը որպես կանխարգելիչ ու բուժիչ միջոց օգտագործելու համար:</p>	4-րդ եռամսյակ		10000.0
Ընդամենը						150628.4

Տնօրեն  (Ստովել Չախյան)

Սրբազնիցիտամբուղեկավար  (Ստովել Չախյան)



ՆԱԽԱՀԱՇԻՎ

Գենաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում կյուբափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հասուն կվտանգավոր ինֆեկցիաների (սիբիրական, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկերի ախտահարումներ) պաթոգենեզի նեյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այլ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	131000.0	26200.0	32750.0	32750.0	39300.0
2	տնտեսային և այլ ծախսեր	19628.4	3925.7	4907.1	4907.1	5888.5
Ընդամենը (առանց ԱԱՀ)		150628.4	30125.7	37657.1	37657.1	45188.5
ԱԱՀ		~ 30125.7	6025.1	7531.4	7531.4	9037.8
Ընդամենը		180754.1	36150.8	45188.5	45188.5	54226.3

Տնօրեն



(Սամվել Չախյան)

Գլխավոր հաշվապահ



(Սերինե Բարսեղյան)

Ծրագրի գիտական ղեկավար




(Սամվել Չախյան)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացներում. Հատուկ մտանցավոր ինֆեկցիաների (սիբիրախտ, տուբերկուլյոզ, մեալցիլիս կայուն ոսկեգույն ստաֆիլակոկների ախտահարումներ) պաթոգենեզի և էյրոհորմոնալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը՝ ծրագրի

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ-ի (հազար դրամ)
1	Կունուակ ծառայություններ, այդ թվում՝	9990.3
	էնկտրաէներգիայի ծառայություն	6500.0
	գազի ծառայություն	1600.0
	ջրամատակարարման ծառայություն	450.0
	կապի ծառայություն	1100.0
	ադրահանություն	340.3
2	Գույք	1000.0
3	Սարքեր և սարքավորումներ	2500.0
4	Նյութեր	1100.0
5	Գործուղումներ	1500.0
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	800.0
8	Հրատարակման ծախսեր	150.0
	Այլ ծախսեր	2588.1
Ընդամենը		19628.4

Տնօրեն  (Սամվել Չախյան)

Գլխավոր հաշվապահ  (Սերինե Բարսեղյան)

Ծրագրի գիտական ղեկավար  (Սամվել Չախյան)



ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

«Կենսաբանական ակտիվ միացությունների դերը օրգանիզմում նյութափոխանակության, ստրեսի, ադապտացիայի ձևավորման և կարգավորման գործընթացում: Հատուկ վտանգավոր ինֆեկցիաների /սիբիրախտ, տուբերկուլյոզ, մետիցիլին կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկկերի ախտահարումներ/ պաթոգենեզի ներդրումն ալ մեխանիզմների կանխարգելման և բուժման գործոնների հայտնաբերումը» ծրագրի կատարողների

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	Զախյան Սամվել Գրիգորի	տնօրեն	կ.գ.դ.	350000
2	Հայրապետյան Հռիփսիկ Լյուդվիկի	գլխավոր ավագ գիտաշխ.	կ.գ.թ.	185000
3	Բարսեղյան Սերինե Հրանտի	գլխ. հաշվապահ	-	250000
4	Ներսիսյան Ստեփան Կառլենի	փոխտնօրեն ընդհ. հարցերով, պարետ	-	220000
5	Ավագյան Լիլիթ Գագիկի	կադրերի ավագ տեսուչ	-	200000
6	Շահբազյան Գեղեցիկ Պոլքատի	հաշվապահ-գանձապահ	-	185000
7	Գրիգորյան Դավիթ Լևոնի	ցանցային ադմինիստրատոր	-	105000
8	Բարսեղյան Գոհար Ռոբերտի	հաշվապահի օգնական	-	50000
9	Թորոսյան Աննա Սուրենի	ռեֆերենտ	-	120000
10	Խալաթյան Ռոզա Արայիկի	մարքեթոլոգ	-	չվճարվ.արձակ
	Ներդրումներին կենսաքիմիայի բաժին Զախյան Սամվել Գրիգորի	բաժնի վարիչ, գլխ.	կ.գ.դ.	230000

11	Ռաֆաելյան Նելլի Արտյոմի	գիտաշխ, լաբ. վարիչ ռեֆերենտ	-	75000
12	Գևորգյան Արմինե Պետրոսի	կրտսեր գիտաշխատող	-	140000
13	Ասատրյան Ռուզան Մանվելի	գիտաշխատող	կ.գ.թ.	100000
14	Դանիելյան Քրիստինե Էդգարի <i>Անալիտիկ քրոմատոգրաֆիայի և մասսպեկտրալ հետազոտությունների լաբորատորիա</i>	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	115000
15	Բաղայան Խաչիկ Վլադիմիրի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	22000
16	Բաղայան Ասյա Մամիկոնի	գիտաշխատող	կ.գ.թ.	22000
17	Հովսեփյան Անիշկա Սերյոժայի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	30000
18	Համբարձումյան Արթուր Ալբերտի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	25000
19	Մաթևոսյան Մարգարիտա Բենիամինի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	40000
20	Հայրապետյան Գոհար Ալբերտի	կրտսեր գիտաշխատող	-	50000
21	Գալստյան Ռաֆայել Մասիսի	ինժեներ	-	67000
22	Ավետիսյան Համլետ Հովհաննեսի	ավագ լաբորանտ	-	85000
23	Բարսեղյան Կարեն Ռոբերտի	լաբորանտ	-	41000
24	<i>Նեյրոսպեցիֆիկ սպիտակուցների լաբորատորիա</i> Պարոնյան Զոյա Խաչատուրի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	130000
25	Գրիգորյան Լուսինե Ստյոպայի	կրտ. գիտաշխատող	-	75000
26	Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	95000
27	Տեր Թադևոսյան Լաուրա Պարույրի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	80000
28	Ստեփանյան Հասմիկ	գիտաշխատող	-	75000


	Արամայիսի			
29	Հիստորիմիայի և ֆունկցիոնալ մորֆոլոգիայի լաբորատորիա Սահակյան Ինեսա Կամոյի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	130000
30	Աբրահամյան Սիլվա Սամսոնի	առաջ. գիտաշխատող	կ.գ.դ.	100000
31	Թումասյան Նարինե Վաղինակի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	95000
32	Քոչարյան Նունե Վլադիմիրի Ակտիվ թթվածնի նյութափոխանակության լաբորատորիա	գիտաշխատող	կ.գ.թ.	90000
33	Սիմոնյան Ռուզան Մաքսիմի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	130000
34	Սիմոնյան Մաքսիմ Արշալույսի	առաջ. գիտաշխ.	կ.գ.դ.	90000
35	Բաբայան Մադլենա Ալեքսեյի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	85000
36	Սիմոնյան Գեղամ Մաքսիմի Մադանաքիմիայի լաբորատորիա	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	42000
37	Մարգարյան Անահիտ Սամվելի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
38	Սիմոնյան Արմեն Արշալույսի	առաջ. գիտաշխ.	կ.գ.դ.	40000
39	Բադայան Ռոզա Բարկենի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	40000
40	Գուրոզյան Մարիամ Միսակի	կրտսեր գիտաշխատող	-	120000
41	Սաքեյան Հռիփսիմե Դավթի	ավագ լաբորանտ	-	չվճարվ. արձակ
	Ախտաբանական կենսաքիմիայի և ռադիոիզոտոպային մեթոդների բաժին			
42	Գևորգյան Գևորգ Արտաշեսի	բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխ.	կ.գ.դ.	170000
	Հայրապետյան Հռիփսիկ Լյուդվիգի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	45000


43	Խաչատրյան Հրանուշ Ֆրունզիկի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
44	Կարապետյան Գոհար Ռուբենի	գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
45	Բարսեղյան Զեմնա Լիպարիտի	ավագ լաբորանտ	-	75000
46	Բարսեղյան Վահագն Հովհաննեսի	գիտաշխատող, պահեստապետ	կ.գ.թ.	185000
47	Գյուլիսանդանյան Գրիգոր Վազգենի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	90000
48	Գևորգյան Ռուզաննա Գևորգի	կրտսեր գիտաշխատող	կ.գ.թ.	80000
49	Սարգսյան Հակոբ Հովհաննեսի	ինժեներ	-	39000
50	Գյուլիսանդանյան Աննա Գրիգորի	գիտաշխատող	կ.գ.թ.	110000
51	Հովհաննիսյան Մարգարիտա Ռոբերտի	կրտսեր գիտաշխատող	-	80000
52	Աղաբաբովա Ազնեսա Աղայի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	115000
53	Հակոբյան Անժելիկա Մանուկի	կրտսեր գիտաշխատող	-	85000
54	Մովսիսյան Նինա Հովհաննեսի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	125000
55	Ալչուջյան Նինա Խաչատուրի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	125000
56	Քնարյան Վարդուհի Հարությունի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	80000
57	Զաքոյան Աննա Արթուրի	կրտսեր գիտաշխատող	-	41000
58	Մկրտչյան Լուսինե Վազգենի <i>Ադենիլ. միաց. նյութավորիս. լաբորատորիա</i>	ավագ լաբորանտ	-	41000
59	Անտոնյան Ալվարդ Ադիբեկի	լաբ. վարիչ, ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	130000
60	Մարդանյան Սոնա Սմբատի	առաջ. գիտաշխ.	կ.գ.դ.	110000
61	Սարգիսովա Ելիզավետա Գրիգորի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	100000
62	Շարոյան Սվետլանա Գարսևանի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	100000
	Հայրապետյան Հռիփսիկ Լյուդվիգի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	30000


63	Կարապետյան Լուիզա Գարեգինի	կրտսեր գիտաշխատող	-	80000
64	Սարգսյան Էլմիրա Յուրիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	85000
65	Հակոբյան Շողիկ Սարգսի	ավագ լաբորանտ	-	41000
66	Քամայան Ռոմիկ Գուրգենի	առաջ. գիտաշխ	կ.գ.դ.	80000
67	Խաչատրյան Նարինե Խաչիկի	կրտսեր գիտաշխատող	-	41000
68	Խաչատրյան Հռիփսիմե Սահակի	կրտսեր գիտաշխատող	-	80000
69	Բաքարյան Անահիտ Կարենի	կրտսեր գիտաշխատող	-	80000
70	Ավանեսյան Վարսիկ Գուրգենի	կրտսեր գիտաշխատող	-	41000
Ներուպեպտիդների կենսաքիմիայի լաբորատորիա				
71	Բարխուդարյան Նինա Հայկազի	լաբ. վարիչ, առաջ. գիտաշխ	կ.գ.դ.	171000
72	Զաքարյան Հերմինե Հարությունի	գիտաշխատող	կ.գ.թ.	չվճարվ. արձակ
73	Սարուխանյան Ֆլորա Պետրոսի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	110000
74	Հունանյան Օվսաննա Վանիկի	գիտաշխատող	կ.գ.թ.	90000
75	Հովհաննիսյան Գայանե Անդրանիկի	կրտսեր գիտաշխատող	-	85000
Կենսաբժշկական հետազոտությունների լաբորատորիա				
76	Սեֆերյան Թորգոմ Երվանդի	լաբ. վարիչ, առաջ. գիտաշխատող	կ.գ.թ.	130000
77	Հարությունյան Ժամհինա Էլկանի	գիտաշխատող	կ.գ.թ.	39000
78	Քուրուրսյան Նոնա Սերգեյի	գիտաշխատող	-	75000
79	Գևորգյան Վահագն Սմբաթի	կրտսեր գիտաշխատող	-	80000
80	Միրաքյան Արփինե Վարդանի	կրտսեր գիտաշխատող	-	41000
Բժշկական կենսատեխնոլոգիայի լաբորատորիա				

81	Գասպարյան Վարդան Կառլենի	լաբ. վարիչ, առաջ գիտաշխ.	կ.գ.թ.	130000
82	Պողոսյան Գայանե Գեորգիի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	75000
83	Միքայելյան Մարիամ Վարդգեսի	ավագ գիտաշխատող	կ.գ.թ.	101000
84	Մարուխյան Սեդա Սամվելի	կրտսեր գիտաշխատող	-	չվճարվ. արձակ
85	Հովհաննիսյան Վարդուհի Ալբերտի	կրտսեր գիտաշխատող	-	90000
86	Դավթյան Մարիա Պավելի	կրտսեր գիտաշխատող	-	75000
87	Գյուրջյան Քրիստինե Գառնիկի	կրտսեր գիտաշխատող	-	85000
<i>Տեխնիկական կազմ</i>				
88	Ավետիսյան Կարեն Մանուկի	կենդանանոցի վարիչ	-	90000
89	Բաբաջանյան Վահե Ռուբենի	կենդանիներ խնամող	-	80000
90	Ռաֆայելյան Կարինե Արտյոմի	գրադարանի վարիչ	-	75000
91	Գևորգյան Ռադիկ Հարությունի	ինժեներ	-	90000
92	Թանքարյան Հռիփսիմե Կարապետի	հավաքարար	-	80000
93	Մովսեսյան Մարինա Ռաֆայելի	հավաքարար	-	80000
94	Զիլինգարյան Մարինե Լևոնի	հավաքարար	-	80000
95	Բաղդադյան Աշոտ Ռազմիկի	խառատ	-	80000
96	Հարությունյան Գենադի Սերգեյի	վերելակի ինժեներ	-	40000
97	Սաֆարյան Սիրարփի Վարդանի	կենդանանոցի բանվոր	-	80000
98	Բալայան Միսակ Արամայիսի	կրտսեր գիտաշխ., գազի տնտ. պատասխանատու	ք.գ.թ.	165000
99	Զաքարյան Արտաշես Կառլենի	ինժեներ, մատակարար	-	200000
100	Գալստյան Գալուստ Իլիչի	պահակ, բանվոր	-	165000
101	Մանյան Հակոբ Արտավազի	պահակ, բանվոր	-	165000

102	Մանյան Արթուր Հակոբի	պահակ, բանվոր	-	165000
103	Գրիգորյան Արմեն Սամվելի	բանվոր	-	115000
104	Վարդանյան Արթուր Ռուդիկի	պահակ, բանվոր		165000
105	Խալատրյան Կարեն Միխայիլի Ընդամենը	այգեպան, բանվոր		165000
				10360000

Կազմակերպության տնօրեն  (Սամվել Չախյան)

Կազմակերպության
անձնակազմի կարավարման
բաժնի պետ  (Լիլիթ Ավազյան)

Օրագրի գլխավոր ղեկավար  (Սամվել Չախյան)

